

ԿՐՕՆԱԿԱՆ

“ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՍՏՈՒԱԾ ԶՇՄԱՐԻՏ”

«Հոգի Աստուծոյ, Աստուած նեմարիս,
Որ իջեր ի Յորդանան եւ ի Վերնասունն,
Եւ յուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին.
Մեղայ յեղիկն եւ առաջի Քո.
Մաքեա՛ զիս վերսին աստուածային հրով քով
Որպէս հեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն.
Եւ ողորմեա՛ Քո արաւածոց եւ ինձ՝ բազմամեղիս»:

(Աղօթք Իւրաքանչիւր Անձին Հաւատացելոյ ի Քրիստոս.
Ենորճալի. Տրդ. տուն):

Հաւատով խոստովանիմ աղօթքի հինգե-
րորդ տունը ուղղուած է առ Հոգին Սուրբ
Աստուած:

Ամենասուրբ Երրորդութեան երրորդ
Անձն է Ս. Հոգին: Որդիի Աստուածութեան
հաւատքին պէս, Ս. Հոգիի Աստուածութեան
դաւանանքն ալ յատուկ է լոկ Քրիստոնէա-
կան կրօնքին: Արդարեւ միայն Քրիստոնէա-
կան տնտեսութեան մէջ է որ բացորոշ կեր-
պով կը յայտնուի և կը գործէ Ս. Հոգին:
Այս կրօնքի յայտնաբերած հոգեւոր ճշմար-
տութեանց զրուծեան մէջ է որ ըմբռնելի
կը գտնայ Ս. Հոգիի գոյութիւնը և անձ-
նաւորութիւնը, և Անոր գերը՝ արարչագոր-
ծութեան և փրկագործութեան մէջ:

Իբրեւ Ամենասուրբ Երրորդութեան Դէմ-
քերէն մին՝ Ս. Հոգին ինք «անքննելի» է,
բայց կը քննէ «զխորս Աստուծոյ», ինչպէս
կ'ըսէ Պողոս Առաքեալ. Սուրբ «Հոգին զա-
մենայն քննէ, և զխորս Աստուծոյ ... զԱս-
տուծոյսն ոչ ոք զիտէ բայց, եթէ ոչ Հոգին
Աստուծոյ» (Ա. Կոր., Բ., 10-11): Ս. Հո-
գին յառաջ կուգայ Հօր Աստուծմէ: Անոր
«ի Հօրէ» յառաջ գալու իրողութիւնը Աս-
տուածաբանութեան մէջ կը յատկանշուի
«բղխում» բառով, ինչպէս Որդիին ելքը ի
Հօրէ ծանօթ է «ծնունդ» բառով: Ս. Հոգին
իբրեւ ճշմարիտ Աստուած նոյն և նման է
Հօր և Որդւոյ և «Անեղ և Համագոյ» է
Աստուածութեան միւս երկու Դէմքերուն
հետ: Տեսանք որ «անեղ» ածականը Աս-
տուածութեան հիմնական ստորագրելներէն
մէկն էր. իսկ «համագոյ» ածականը կը
հաստատէ Ս. Հոգիին, այսպէս ասած, «ժա-

մանակակից» և նոյն բնութենէ եղած ըլ-
լալը Հօր և Որդիին հետ, հետեւաբար Ա-
նոնցմէ «ոչ յետոյ և ոչ կրտսեր» է: Սուրբ
Հոգիին ի Հօրէ բղխումը «անսկզբնաբար»
է, այսինքն բղխում՝ որ սկիզբ չէ ունեցած.
և «անհատապէս» է, այսինքն շարունակա-
բար, անհատնում կերպով բղխող:

Ս. Հոգին փառակից և Տիրակից է Որ-
դիին հետ: Անոր հետ ունեցած իր առնչու-
թիւնը կը յատկանշուի «առնուլ» բայով.
Քրիստոս երբ առաքեալներուն կը բացա-
տէր որ իր մեկնելէն յետոյ իրենց պիտի
ղրկէ Միութարիչ Ս. Հոգին, կ'աւելցնէ.
«Հոգին ճշմարտութեան առաջնորդեսցէ ձեզ
... նա զիս փառաւորեսցէ, զի յիմեւ անի
առնուցու և պատմեսցէ ձեզ: Զամենայն
ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ
ասացի ձեզ թէ յիմեւ անի առնուցու և
պատմեսցէ ձեզ» (Յովհ., ԺԶ., 14-15):
Իսկ շարականազիրը կ'ըսէ, խօսքը ուղղելով
Ս. Հոգիին. «Առող յՈրդւոյ անճառաբար»:

Անճառելի այս խորհուրդը, այսինքն
Ս. Հոգիին առնչութիւնը Որդիին հետ,
ծնունդ տուած է Արեւելեան և Արեւմտեան
Եկեղեցիներու մէջ մեծ վէճերու, և հուսկ
ապա ձեւական պատճառներէն մէկը եղած
է Հռովմէական և Բիւզանդական Եկեղեցի-
ներու բաժանման: Լատին Եկեղեցիի դա-
ւանանքին մասն է որ Ս. Հոգին կը բղխի
ի Հօրէ «եւ յՈրդւոյ» (Փիլիսոգուէ): Հայց.
Եկեղեցիին կը հետեւի հնագոյն աւանդութեան
և դաւանանքին՝ ըստ որում Ս. Հոգին կը
բղխի միայն ի Հօրէ:

Ս. Հոգին ըլլալով «բղխումն ի Հօրէ»,
իր կարգին աղբիւր է բոլոր շնորհներու և
բաշխող է ամէն տեսակ ձիրքերու, տա-
ղանդներու և հոգեւոր պարգեւներու: «Մէ-
կու մը տրուած է Հոգիէն իմաստութեան
խօսք, ուրիշի մը՝ գիտութեան խօսք, ու-
րիշի մը՝ հաւատք, ուրիշներուն՝ հրաշա-
գործութեան կարողութիւն կամ մարգա-
րէութիւն կամ մարդոց միտքերը կարգաւոր
կարողութիւն. այս բոլորը կուտայ մէկ և
նոյն Հոգին, և կը բաժնէ իւրաքանչիւրին
ինչպէս որ կ'ուզէ» (Ա. Կոր., ԺԲ., 4-11):

Ս. Հոգին եղած է աղբիւրը և ներշնչ-
ողը այն իմաստութեան՝ որ կ'երևի Հին
Օրէնքի և Մարգարէութեանց, ինչպէս նաև
Աւետարաններու և Նոր Ուխտի բոլոր գիր-

քերուհի մէջ: Ս. Հոգին է որ «եօթնարփեան» շնորհներով կը զարդարէ զանոնք՝ որոնց վրայ որ կ'իջնէ. այդ «եօթնարփեան» շնորհները յիշուած են Եռայի Մարգարէի կողմէ հեռեկալ կարգաւ. «Հոգի 1) իմաստութեան և 2) հանձարոյ, Հոգի 3) խորհրդոյ (ողջամիտ խորհուրդներ յղանալու կամ ուրիշներուն տալու ձիրք) և 4) զօրութեան, Հոգի 5) զիտութեան և 6) աստուածապատութեան, և Հոգի 7) երկիրդի Աստուծոյ» (ԺԱ., 1-3):

Նոր Աւիստի մէջ յայտնուած բոլոր ճշմարտութիւնները իրենց ստուերական, կամ պատկերաւոր և կամ քողարկեալ տկնարկութիւններն ունին Հին Կտակարանի մէջ: Սրգարե, Նոր Աւիստի մէջ Ս. Հոգիի կատարած տնօրէնութիւններուն բազում պատկերաւոր ակնարկութիւններ կան Հին Կտակարանի մէջ, որոնք միաժամանակ գաղափար մը կուտան, թէ իսկ անկատար կերպով. Ս. Հոգիի բնութեան և աստուածային գործունէութեան մասին:

Ասոնցմէ առաջինը և ամենէն ծանօթը կ'երևի Աստուածաշունչի առաջին գլուխի առաջին տողերուն մէջ. «Եւ Հոգի Աստուծոյ չըջէր ի վերայ ջուրց» (Մենդ., Ա., 2): Ծարականազիրը հոյակապ այս պատկերը կը մեկնէ իբրեւ արարածներ ստեղծելու գործողութիւն. «Որ ի վերայ ջուրցն գոլով ստեղծանէիր զարարածս»: Աստուածաշունչական մտած այս պատկերին զուգահեռ կանը կ'երևի Նոր Աւիստի մէջ, մկրտութեան ջուրերուն վրայ Ս. Հոգիի էջքով, և մկրտուողները վերածնելով իբրեւ Աստուծոյ որդիներ: — Առաջին «լինելութեան», այսինքն մարդու ստեղծագործութեան տառն, Աստուած փչեց մարդու երեսին կեանքի շունչը և մարդ եղաւ հոգիով օժտուած էակ: Իսկ «յերկրորդի լինելութեան», այսինքն Բարութեան յետոյ, Քրիստոս փչեց Առաքելաներուն վրայ՝ ըսելով. «Առէք Հոգի Սուրբ»: — Երբ մարդիկ միարանած էին աշտարակ մը շինելու համար, որուն գլուխը մինչև երկինք պիտի հասնէր, որպէսզի եթէ երկրորդ անգամ ջրհեղեղ պատահէր մարդիկ անոր վրայ ապաստանելով ազատէին: Աստուած անոնց լեզուները «խառնակեց», ի պատիւ իրենց ամբարտաւանութեան, և մարդիկ զանազան տգեղութիւններով

նրեցան: Իսկ Հոգեգալուստին, հակառակ սրբոցեսօր տեղի ունեցաւ: Զանազան երկիրներէ հաւաքուած այլալեզու մարդեր, ամէնքն ալ իրենց բարբառովն իսկ հասկցան Առաքելոց խօսած լեզուն. ինչ որ այլաբանօրէն կը նշանակէր թէ Աւետարանը բոլոր լեզուներով պիտի քարոզուէր աշխարհի վրայ և անով բոլոր ազգերու միանալու կարելիութիւնը պիտի տրուէր: Եկեղեցիի հաստատումով արդարեւ Աստուած շինեց Նոր Աշտարակը, որուն մէջ մտնելով մարդիկ ստուգապէս պիտի ազատէին մեղքի ջրհեղեղի հեղձուցիչ մահէն և հոգեոր բնաջնջումէն: — Ի հնումն, Աստուծոյ Հոգին իջաւ և զիշերը հրեղէն սիւնի ձևով, իսկ ցերեկը հովանաւոր ամպի կերպարանքով առաջնորդեց Խորայէլի առաներկու ցեղերը անապատի մէջէն դէպի Աւետեաց երկիրը: Իսկ ի նորումս, երկոտասան Առաքելները կ'առաջնորդէ «ի յաւետարան», այսինքն աշխարհի ամէն կողմ Աւետարան քարոզելու և մարդիկը առաջնորդելու Աւետեաց երկիրը: — Ի հնումն, Աստուծոյ Հոգին իմաստութեամբ լեցուց Բեռեկիւնը, Վկայութեան Խորանին ճարտարապետը: Իսկ Հոգեգալուստով կը լեցնէ մարդերը սրբութեամբ և զանոնք կը շինէ խորան Ս. Երրորդութեան:

«Որ իշեւ ի Յորդանան եւ ի վերնասունն» — Ս. Հոգին տեսանելի կերպով գլխաւորաբար երկիցս կ'երևի Քրիստոնէական տնտեսութեան մէջ. մին Քրիստոսի մկրտութեան տառն, իսկ միւսը՝ Հոգեգալուստեան օրը: Առաջին դէպքին, Ս. Հոգին կ'երևի Յորդանանու ջուրերուն վերեւ ալիւնի կերպարանքով և «մարմնաւոր տեղեւոր», այսինքն նիւթական կամ տեսանելի կերպով:

Ս. Հոգիին ազանիի կերպարանք առնելը խորհրդանշական իմաստ ունի և կը բացատրէ, թէ և շատ անկատար կերպով, Ս. Հոգիի բնութիւնը: Ազանին բոլոր թռչուններուն մէջէն կը զանազանութիւն շատ մը յատկանիշներով: Նախ սիրազեղ թռչուն մըն է և առհասարակ ճանչցուած է իբրեւ խորհրդանշան անարատ և անմեղ սիրոյ: Ս. Հոգին ալ՝ աստուածային սիրոյ գեղումն է երկրի վրայ, ինչպէս շարականագիրն ալ կ'ըսէ սքանչելի կերպով. «Սէրդ

ի Սիրոյ զԱէրգ առաքեաց» . այսինքն Սէր - Բրիստոսը Սէր - Հայր Աստուծմէ՛ զՔեզ, Սէր - Սուրբ Հոգիդ զրկեց: Դարձեալ նոյն շարականագիրը, որ նոյնինքն այս մեծ աղօթքի հեղինակ ներսէս Շնորհալին է, ուրիշ տեղ մը, իր խօսքն ուղղելով Ս. Հոգիին, կ'ըսէ. «Գգուես սիրով աղաւնակերպ, զմարդիկ ծնանիս աստուածակերպ»: — Աղաւնին մեզի ծանօթ միակ թռչունն է որ իր կուրծքէն կը կերակրէ իր ձագը . այսինքն իրեն համար մթերած կերն է որ կը փամբէ իր ձագուկին, ինչ որ սիրոյ և հոգածութեան աւելի բարձր արտայայտութիւն մըն է: Աղաւնին, հակառակ իր խելօք և խաղաղ երևոյթին, ամենէն արագաթռիչ թռչուններէն է, ինչ որ կը հաստատէ իր ուժականութիւնը: Ս. Հոգին ոչ միայն աստուածային սիրոյ և խաղաղութեան մարմնացումն է այլ նաև զօրութեան: Յիսուս «Հոգւով Աստուծոյ» կը հանէր դեերը, այսինքն Աստուծոյ զօրութեամբ կը կատարէր Իր հզօր գործերը: Մեր Տէրը երբ Իր վերջին հրահանգները կուտար Իր աշակերտներուն նախ քան համբառնալը, կը կնքէր Իր խօսքերը հետեւեալ հաւաստումով. «Առջիք զօրութիւն ի հասանիլ Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր և եղիջիք ինձ վկայք . . . մինչև ի ծագս երկրի»: — Աղաւնին ընտրուեցաւ աւետարներ ըլլալու ջրհեղեղէն յետոյ, թէ Աստուծոյ բարկութեան հետ իջած են նաև ջուրերը, և թէ բուսականութիւնը սկսած է արդէն իսկ աճիլ, ի նշան և ի հաստատութիւն բերաւ ձիթենիի նոր ծլած ճիւղ մը: Այս պատկերը — աղաւնի մը ձիթենիի ճիւղ բռնած իր կտուցին — զարձաւ խորհրդանշանը խաղաղութեան և ապահովութեան: Բրիստոսի թաղուելովը Յորդանանու ջուրերուն մէջ և Անոր երևնալով երկրի վրայ, մեղքի համատարած ջրհեղեղը վերջացած էր և նոր ու վերածնեալ կեանքի մը սկիզբը դրուած էր: Ս. Հոգին էր որ աղաւնակերպ յայտնուելով ի Յորդանան, աւետեց այս լուրը մարդկութեան: Յիսուսի մկրտութեան յաջորդեց Ս. Հոգիի էջքը «մարմնաւոր տեսիւնամբ», մարդոց հասկցնելու համար թէ ամէն օրինաւոր մկրտութեան պիտի յաջորդէ Ս. Հոգիի էջքը, ենթական «աստուածակերպ ծնանելու» և լուսաւորելու համար, ինչպէս պիտի տեսնենք ստորև:

Իր փրկարար արգասիքներով աւելի նշանաւոր եղաւ Ս. Հոգիի էջքը ի վերնատուն: Այս գէպքը կարելի է նկատել Սուրբ Հոգիի մարմնեղութիւնը: Դէպքը տեղի ունեցաւ Բրիստոսի համբարձումէն 10 օրեր յետոյ, Հրէից Պենտեկոստէ կոչուած տօնին օրը՝ որ անոնց Զատիկէն յիսուն օրեր յետոյ կուգար: Յիսուս նախ քան համբառնալը պատուէր տուած էր Իր աշակերտներուն երուսաղէմէն չհեռանալ, «այլ սպասել աւետեացն Հօր», որու մասին նախապէս աւելի հանգամանօրէն խօսած էր անոնց: Իսկ Առաքելոց սպասելուն պատճառը բացատրուած էր Յիսուսի կողմէ այս խօսքով. «Պիտի մկրտուիք Ս. Հոգիով» (Գործք, Ա., 4-5): Ու արդարեւ երբ «ամէնքը միաբան միասին» էին, «յանկարծակի երկինքէն հնչուեց» մը եղաւ, ուժգին հովի ձայնին պէս. և այս հոգեւոր ներկայութիւնը, ամէնքին զգալի եղանակաւ մը, լեցուց ամբողջ տունը՝ ուր Առաքեալներ հաւաքուած էին: Իւրաքանչիւր ոք նշմարեց որ իր ընկերներուն գլխուն վրայ կրակէ լեզուներ կ'իջնէին և կը նստէին անոնց վրայ: «Ամէնքն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով և սկսան խօսիլ այլևայլ լեզուներով, ինչպէս որ Հոգին իրենց բարբառել կուտար»: Այսպիսի հաշալի և տպաւորիչ եղանակաւ Ս. Հոգին օծեց, սրբացուց և Աստուծոյ ընտրեալ նոր ժողովուրդին ծնունդ տուաւ: Այս գէպքով կը սկսի Բրիստոնէական եկեղեցիի պատմութիւնը՝ որ պիտի շարունակուի մինչև ի կատարած աշխարհի:

Ինչպէս ականարկեցինք գէպքը պատահեցաւ Հրէից Պենտեկոստէի օրը. ասիկա պարզ զուգահիւսութիւն մը ըլլալէ աւելի Աստուծոյ նախախնամութեան խորհրդալից մէկ կարգաւորութիւնն էր: Սքանչելի զուգահեռականութիւն մը կայ Հրէական Պենտեկոստէի տօնի իմաստին և Բրիստոնէական Հոգեգալստեան միջև, որ առաջին օրերէն իսկ եկեղեցիի մեծագոյն տարեկան տօնական օրերէն մէկը եղաւ: Հրէական Պենտեկոստէն կը յիշատակէր նախ Օրէնքի տրուելութիւնը Սինա լեռնէն Մովսէսի ձեռամբ: Սինայի վրայ տրուած Օրէնքով և այդ առթիւ կնքուած Ուխտով Իսրայէլը իրաւամբ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը եղաւ: Բրիստոսի Մահուան և Յարութեան

յաջորդող Պենտեկոստէի օրը Աստուած ընտելեց նոր ժողովուրդ մը՝ որ պիտի չի սահմանափակուէր մէկ ցեղի կամ ժողովուրդի մէջ, այլ պիտի բաղկանար աշխարհի բոլոր ազգերէն. Առաքեալներու խօսած այլեւայլ լեզուներուն իմաստը այդ էր: Սրբաբան տեղ վերնատան մէջ Աստուած մարդկութեան տուաւ Շնորհք՝ որ կ'ընծայուի Ս. Հոգիի միջոցաւ:

Բաց աստի, Պենտեկոստէն նաեւ հնձոց տօն էր, այսինքն տարեկան հունձքը սկսելու և անոր առաջին պտուղը Աստուծոյ ընծայելու օր: Հոգեգալուստով սկսաւ հոգեւոր հունձքը փրկեալ մարդերուն՝ որ պիտի չարունակուէին մինչև ի կատարած աշխարհի: Հոգեգալստեան օրը երեք հազար հոգիներ, իրրեւ երախայրիքը գալիք անհատնում մեծ հունձքին, ընծայուեցան Աստուծոյ, դարձին գալով Առաքեալներու քարոզութեամբ և Քրիստոնեայ մկրտուելով:

«Լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւագանին».— Մկրտութիւնը ի սկզբանէ անտի ճանչցուած է իրրեւ խորհուրդ լուսաւորութեան: Մկրտութեան աղօթքներուն մէջ բազում են խնդրանքներ, որպէսզի ենթական նորոգուի Ս. Հոգիի «լուսով շնորհաց»: Յաւարտ մկրտութեան քահանան կը կարգայ աղօթք մը որ կը սկսի այս աղօթքով. «Որ լուսաւորեցեր զարարածս Քո, Քրիստոս Աստուած, ծագելով զլոյս գիտութեան Քո յանձինս մեր»: Փակման ուրիշ աղօթք մըն է հետեւեալը. «Որք մկրտեցան և լուսաւորեցան և ետուր նոցա զգործութիւն Քո, Տէր, . . . պայծառանալ ի լոյս աստուածգիտութեան Քո»: Լոյսը որով կը լուսաւորուինք Մկրտութեամբ՝ նախ լոյսն է Աստուծոյ զանազան շնորհաց՝ որոնցմով կը պայծառանայ ենթական. ապա լոյսը ճշմարտութեան՝ զոր կը ստանայ նորադարձը իրազեկ ըլլալով Աստուծոյ լուսաւոր պատուիրաններուն, և աշխարհի լոյսը եզոզ Քրիստոսը ճանչնալով և Անոր լոյսին հաղորդ լինելով: Ան որ չէ մկրտուած կը մնայ հեթանոսական խաւարի մէջ:

«Մաքեա զիս վերսին աստուածային հրով եով, որպէս հեղեկ լեզուօք սուրբ զառաքեալսն».— Աղօթատունին միակ խընդրանքն է այս: Ամբողջ նախադասութեան մէջ նշանակալից բառը վերսին մակբայն է:

Մկրտութեան խորհուրդի կատարման ընթացքին բազմիցս խնդրանքներ կ'ըլլան, որպէսզի Աստուած մաքեւ զմեզ մեղքի աղտերէն. «Նորոգեա՛ զսա յամենայն նեղութենէ մեղաց»: Կամ՝ «Տո՛ւր սմա գործութիւն արժանաւորիլ ի մաքրութիւն սուրբ աւագանին»: Սակայն քանի որ «աշխարհ ամենայն ի չարիս կայ», ու մենք պարտաւորուած ենք քաշել աշխարհի բարոյական տղամիտ ընդմէջէն, անխուսափելիօրէն վերստին պիտի աղտոտինք ցանկութեան, ատելութեան, նախանձի, հասարկութեան և նման մոլութեանց զործած ապականութիւններէն: Անուագն անխուսափելի բարոյական թերացումներ պիտի ունենանք՝ որոնք իրրեւ փոշի պիտի նստին մեր հոգիներուն վրայ: Հետեւաբար չարունակաբար հարկին տակ պիտի գտնուինք աղօթելու Սրբութեան աղբիւր Սրբաբար Հոգիին որ վերսին մաքրէ զմեզ մեր մեղքերէն իր աստուածային կրակով: Կրակը ոչ միայն լուսաւորող յատկութիւն ունի, այլ նաեւ սրբիչ և մաքրող է: Այս իսկ պատճառով, Ս. Հոգիի երկրորդ խորհրդանշանը կրակն է, կիզող և մաքրող կրակը՝ որ կը լուսաւորէ միանգամայն:

Դատական է պատկերը ոսկին՝ որ կը մաքրուի կրակով, այսինքն կը զտուի և կը զատուի իր բնութեան օտար տարրերէն, վերածուելու համար մետաղներու թագուհիի ծանօթ գեղեցիկ նիւթին: Նոյնը կը պատահի իրենք զիրենք Ս. Հոգիի կրակին ենթարկողներուն, մկրտութեամբ Ս. Աւագանին: Յովհաննէս Մկրտիչ երբ կ'սկնարկէր իրմէ յետոյ գալիք Քրիստոսի մկրտութեան, կ'ըսէր. «Ան պիտի մկրտէ զձեզ Ս. Հոգիով և կրակով»: Հոգեկան այս մաքրազարգումի և վերստին լուսաւորութեան համար չարունակաբար զիմենք Աստուծոյ Ս. Հոգիին, ըսելով.

«Հոգի Աստուծոյ, Աստուած նշմարիս, որ իշար Յորդանան եւ վերհասուն, եւ լուսաւորեցի զիս սուրբ աւագանի մկրտութեամբ. Մեղանցեցի երկնքի դէմ եւ Քո առջեւ. վերսին մաքրէ զիս Քո աստուածային կրակով ինչպէս մաքրեցի կրակէ լեզուներով սուրբ առաքեալներ:

«Եւ ողորմէ Քո առաքածներդ, եւ ինձի՝ ծանր մեղաւորս»:

(6)

ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ